ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 92 <<21>> <<08>> 2017թ.

☎ (0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ղեկավարի թիվ 22-Ա, 23-Ա որոշումները և աշխատակազմի քարտուղարի թիվ 08 հրամանը :

Առդիր 3 թերթ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ.Սարամեջ (21.08.2017թ.)
Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» Օգոստոսի 2017 թվականի թիվ 22-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ.-ի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918 –Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջներով , և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 27.03.2015թ.-ի թիվ 29 դրական եզրակացությունը և ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի ավագանու «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» 16.01.2015թ.-ի թիվ 04-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ .

1.Լոռու մարզի Սարամեջ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 0.8270 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր / կադաստրային ծածկագիր՝ 06-098-0066-0003/ փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որից՝

0.25181 հեկտար հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համայնքային կենտրոնի պետական գրանցման և նախատեսվող մանկապարտեզի շենքի կառուցման համար

0.5752 հեկտար բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ փաստացի բնակելի շինություններով զբաղեցրած հողամասը, քարտեզագրման սխալի ուղղման նպատակով;

2.Կատարել փոփոխություն պետական իրավունքների գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշիռում :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (17.08.2017թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» Օգոստոսի 2017 թվականի թիվ 23-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1) Սարամեջ համայնքի սեփականության հանդիսացող 06-098-0066-0003 ծածկագրի տակ գտնվող 0,2181 հա հողամասին տրամադրել «գ. Սարամեջ, 1 փողոց, 2 նրբ. 12 » հասցեն:

2) Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (17.08.2017թ.)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մարամեջ համայնք, հասցե գ. Մարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

ՀՐԱՄԱՆ

21 Օգոստոսի 2017 թվականի N 08

ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.2.-1) ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի >> 159,161 հոդվածներով և ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1384-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետ Անուշ Ղազարյանի դիմումը

Հրամայում եմ.

Սարամեջի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2.-1) Անուշ Ղազարյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդային օրերը՝ 21.08.2017թ.-ից մինչև 23.09.2017թ.-ը:

Աշխատանքի ներկայանալ 25.09.2017թ.-ին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

գ.Սարամեջ (21.08.2017թ.) Կ.Տ